Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N **23.6/[53675]-10**

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 29-ԻՆ ԺԱՄԸ 09:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ն. Երիցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Գ. Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Մ. Թումասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հրավիրվածներ՝

Ա. Աղաջանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Խ. Ավալյան	ՀՀ վարչապետի օգնական
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Վ. Նիկոյան	ՀՀ վարչապետի օգնական
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտե-

	սագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ֆ. Փիրումյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրու-մային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոնե պետական հիմնարկի տնօրեն

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի 2-րդ փուլի՝ Աշտարակ-Թալին և 3-րդ փուլի՝ Թալին-Գյումրի ճանապարհի Անկախ մոնիթորինգի գործակալության ընտրության մրցույթի արդյունքների հաստատում

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր 2-րդ փուլի՝ Աշտարակ-Թալին և 3-րդ փուլի՝ Թալին-Գյումրի ճանապարհի Անկախ մոնիթորինգի գործակալության ընտրության մրցույթի արդյունքները:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի բազմափուլ ֆինան-սավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի առաքելության 2010 թվականի սեպտեմբերի 13-20-ն այցելության հուշագրի մասին

(Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանի՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի առաքելության 2010 թվականի սեպտեմբերի 13-20-ն այցելության հուշագրի մասին հաղորդումը.

2) հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ֆ. Փիրումյանին՝ ՀՀ արդարադատության նախարար Գ. Դանիելյանի առաջարկությանը համապատասխան հանդես գալ խորհրդի անունից և ըստ այդմ հստակեցնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի բազմափուլ ֆինանսավորման գործիքի վերաբերյալ Ասիական զարգացման բանկի առաքելության 2010 թվականի սեպտեմբերի 13-20-ն այցելության հուշագրի ձևակերպումները։

Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ ՀԱՐՑ

---

3. Երևան- Աշտարակ 11,71 կմ երկարությամբ գոյություն ունեցող ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքների գնահատման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին

(Մ. Վարդանյան, Ֆ. Փիրումյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Երևան-Աշտարակ 11,71 կմ երկարությամբ գոյություն ունեցող ճանապարհային հատվածի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման մրցույթի արդյունքների գնահատումը իրականացնել 2010 թվականի հունիսի 2-ի կառավարման խորհրդի որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով.

2) 2010 թվականի հունիսի 2-ին ստեղծված գնահատման հանձնաժողովի (ՀՀ վարչա-պետի խորհրդական Ս. Տեր-Պողոսեանին փոխարեն) կազմում ընդգրկել ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Ղարիբյանին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ղ. ԹՈՒՄԱՍՅԱՆ